*1021. ԲԵԿՈՐ.* ագուցված գյուղամիջի նոր եկեղեցու պատի մեջ.



Ի ԹԻ[ԻՆ]Ո(1000) . . . . . .
. . . . . . . ՁԱՔ . . .
. . . ԷՔ ՅԻՇԵ[ՑԷՔ]:

***Ծանոթ.*** Հավանաբար պետք է ավարտվեր *որք երկրպագէք յիշեցէք ի Քս* կապակցությամբ:

*1022. ՏԱՊԱՆԱՔԱՐ.* գյուղամիջի եկեղեցու մոտ, որը հետագայում դարձրել են գուռ.



ԹՎ[ԻՆ]. :ՌՃՀԵ: (1726):

***Ծանոթ.*** Գյուղը հայաթափվել է XIX դ. 20-ական թվականների վերջերին, հաճախակի կրկնվող թուրք-պարսկական բախումների հետևանքով:

*1023. ԽԱՉՔԱՐ.* գյուղից արևմուտք, գերեզմանոցում, 1 տող.



ԹՎ[ԻՆ] ՋՁ (1457):

*1024. ՏԱՊԱՆԱՔԱՐ.* գյուղի հարավարևմտյան գերեզմանոցում, 3 տող.



ԹՎ[ԻՆ] :Ռ: Ի: (1571)
ԱՅՍ ԷՀԱՆԳԻՍՏ
ՂԱՆՎԷՏՈՒՆ:

***Ծանոթ.*** Հարթ սալատապան է, երկարապոչ նռան, սափորի և հովհարաձև (աստծո աչքի) զարդերով: Անունը երկմտելի է:

## ԱԳԱՐԱԿ

Գյուղի արևելյան եզրին, կամրջից քիչ հեռու, խճուղուն մոտ կա մի հին և ընդարձակ գերեզմանատուն, ուր մնում են բազմաթիվ խաչքարերի բարձր պատվանդանները միայն. զարմանալ կարելի է, որ հարյուրի չափ խաչքարեր իսպառ ոչնչացել են: Այդտեղ մնում է մի կանգուն խաչքար և տապանաքարեր:

***1025. ԽԱՉՔԱՐ.*** թիկունքին, 10 տող.



Ի ԹՎԻՍ :ՉԺԷ: (1268), ԵՍ
ՍԱՐԳԻՍ, ՄԵՂՈՒՑԵ[Ա]Լ
ՔԱՀԱՆԱՅ, ԿԱՆԳՆԵ-
ՑԻ ԶԽԱՅՉՍ Ի ԲԱՐԷԽ-
ԱՒՍՈՒԹԵ[Ա]Ն ԻՆՁ ԵՒ ՏԻՐ-
ԱՆՑԻՆ ՏԻՐՈՀՈՅ ԻՄ-
ՈՅ, ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄ-
ՈՑ: ՈՐՔ ԿԱՐԴԷՔ ՅԱՂԱՒԹՔ
ՅԻՇԵՑԷՔ ԵՒ ԱԾ ՁԶ-
ԵՔ ՅԻՇԷ: ԱՄԷՆ: ՓՅ:

***Ծանոթ.*** Վերջին երկու տառերն անհասկանալի են: ՓԱՌՔ ՅԻՍՈՒՍԻՆ կամ ՓՐԿԵԱ ՅԻՍՈՒՍ կարդալն անիմաստ է, գուցե խաչքարագործ ու գրիչն է ՓԱՅԼԱԿ: Ի դեպ, ամիրսպասալար Սարգիս Զաքարյանի խաչքարի (1187 թ.) թիկունքին Փ.Յ.Ս. տառերը, Կ. Ղաֆադարյանի ենթադրությամբ, կարող են լինել «փորագրող և խաչքարը կազմող վարպետի անվան սկզբնատառերը» (Սանահին, էջ 79):

***1026. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ.***

[ԹՎԻՆ] ՌՁԳ (1634):

***Ծանոթ.*** Նախորդ խաչքարից արևելք տարածված են բնակավայրի ավերակներն ու գերեզմանոցը խաչքաբեկորներով ու տեղահանված տապանաքարերով: Ինչպես վկայում է այս բեկորը, բնակավայրը շեն է եղել մինչև XVII դ. կեսերը:

***1027. ԽԱՉՔԱՐ.*** ընկած, գյուղից հարավ, Ձորագետի ձախ ափի եկեղեցու մեջ, խորանի տակ, 5 տող.



Ի ԹՈՒ[ԻՍ] ՀԱՅՈՑ :ՈՇԱ: (1202) ԵՍ ԳՐ-
ԻԳՈՐ ՆՈՒԱՍՏ ԿՐԱՒՆԱՒՈՐ, ՇԻ-
ՆԵՑԻ ԶՍՔ ՍԻՈՆՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑ-
Ի ԶԽԱՉՍ: ՈՐՔ ԵՐԿԻՐՊԱԳԱՆ
ԷՔ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՍՋԻՔ:

*Հրատ.* «Լրաբեր», 1978, 4, 69:

***Ծանոթ.*** Ժայռերի մեջ կան բազմաթիվ բնական քարայրներ, որոշ դեպքերում մշակված-հարմարեցված կենցաղին: Սուրբ Սիոն մատուռ-եկեղեցին վերակառուցված քարանձավ է: Պատերը շարված են անմշակ քարով, առանց լիցքի: Համեմատաբար խնամքով են մշակված մուտքի քարերը:

**1028. *ՏԱՊԱՆԱՔԱՐ*.** դագաղաձև, գյուղի եզրին, եկեղեցուց ոչ հեռու, հարավային ճակատին, 6 տող.

ԾԼ 1740
ԵՄ՝ ՉԻԼԱՎԸՍ, ԱԼԽԱՆԵՆ
1819 ՍԵՐ ԸՆՏ[Ա]ՆԵՕՔ ԱԶԱ-
ՏԵՑԱՆՔ Ի ՃՈՐՏՈՒԹԵՆԷՆ:
ՁԱՒՐԸՆԱԿՑԷ: 1848 ԱՄԻ Վ[Ա]ԽՃԱՆ
ԱՌԻ:

***Ծանոթ***. Չիլավը ճորտությունից ազատել է իր գերդաստանը, կոտորել Լոռի ներխուժած լեզգիների ջոկատը:

**1029. *ԿԱՄՈՒՐՋ*.** Ջորագետի վրա, խելի արևելահայաց պատին, 6 տող.



ԿԱՄՈՒՐՋՍ ԿԱՌՈՒՑ
ԻՆ ԵՂԲԱՐՔ ԹԱԴԷ
ՈՍ ԵՒ ԱԼԷՔՍԱՆ
ՁԻԼԱՎԵԱՆՑ ԵՒ ԿԻՆՆ
ԱԼԵՔՍԱՆԻ՝ ԽԱՄՓԵՐ-
ՎԱՆ: 18 $\frac{7}{1}$ 93:

***Ծանոթ***. Կամրջի աջ թևը բնական ժայռն է, որը հարթվել է, և մյուս ափի խելը հավասարազոր պատ է, որոնց վրա դրվել են գերաններ սայլերի, հետիոտնի, անասունների և երիվարների անցման համար: Ի դեպ. վիմագրի տակ նշմարվում են հին գրերի հետքեր՝ ջնջված Ջիլավյանների կողմից կամուրջը վերակառուցելու ժամանակ:

**1030. *ԽԱՉՔԱՐ*.** Ագարակի գյուղամիջյան եկեղեցու շրջապատի գերեզմանոցում, թևերի վրա 1 տող.

Թ[ՎԻՆ] ՋԿԴ (1515):

## ԼԵՋԱՆ

**1031. *ԵԿԵՂԵՑԻ*.** մուտքի գլխին և արևմտյան պատի խաչի երկու կողմում, 3 տող.



1892
ՍԵՐԳԻ, ՊԵՏ[ՐՈՍ]
ԳՐԻ ԳՈՒԼԽԱՆ

ՅՊՎԱ

***Ծանոթ***. Եկեղեցին հիմնովին վերաշինվել է 1892 թ.: Գյուղացիները կոչում են Կարմիր վանք: Այն եռանավ բազիլիկ է, երկթեք տանիքով, խորանը քառալանջ է՝ ծածկված քարի ելունավոր սալերով: Պատերը շարված են տարագույն, կանոնավոր մշակված քարերով: Պատերի մեջ կան հին բեկորներ, նաև՝ խաչքարեր: Լուսամուտից ցած խաչի